

րեայ պահեցողութեանց էր այն, եւ թէ «զնոյն քառասունս եւ մեր մերով տկարութեամբս օր ըստ օրէ պահօք կատարեմք» (35):

Բ. Այս պահքն ընդհանրական Եկեղեցւոյ մէջ կը պահուէր՝ հրաժարելով գլխաւորապէս մսէ: Այնպէս որ ըստ Սոկրատայ՝ շատեր ձուկն եւ ոմանք թռչուն կ'ուտէին, մինչդեռ Անտիոքացիք կը զգուշանային աղոցմէ եւս, ինչպէս կ'աւանդէ Ոսկերեբան: Տրուդեան ժողովը ջանալով միօրինակութեան վերածել, արգիլեց ձուկն ու կթեղէնը: Դ դարու յոյն եւ լատին Հարք կը մերժէին գինին ալ: Սակայն է եւ Ը դարերէն սկսեալ՝ արեւմտեայց մէջ թոյլ տրուած են ձուն, կաթը, պանիրը, ձուկն ու գինին (կարբ. Բ, 2149-51). այս ինքն գրեթէ համաձայն Հայոց սովորական պահոց հնագոյն ձեւին (աստ, 406-9):

Բայց մեր քով աւելի խիստ կը գտնենք զայս քան ուրիշ պահքեր. այս պատճառաւ կը կոչուէր «երեւելի պահք» (Մանդ. 35) կամ «աւագ պահք» (ՅՏ. Եգկ. Խրտ. ԺԸ), եւ ի հնուց զայն կ'անցնէին «ուժգիւ պահօք» (Տես. 46): Եթէ հարազատ է Մանդակունւոյն մէկ գրուածն «Յաղագս քառասնորդական պահոց՝» որ վաւերական ճառից թուէն դուրս կը մնայ, անոր